ՀՈԲԵԼՅԱՆՆԵՐ

ԱԵԼԻՏԱ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ
Նվիրվում է Անանիա Շիրակացու ծննդյան 1400-ամյակին

ԱՆԱՆԻԱ ՇԻՐԱԿԱՑԻՆ ՄԻՋՆԱԴԱՐԻ ՀԱՅ ՄԱՏԵՆԱԳԻՐՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՄԲ

Անանիա Շիրակացին, որին հայ միջնադարը կոչում էր Համարող, եղել է VII դարի նշանավոր մաթեմատիկոս, տիեզերագետ, տոմարագետ, աստվածաբան, մատենագիր և աշխարհագրագետ:

VII-IX դարի ժամանակահատվածում հայ մատենագրության մեջ հիշատակումներ չկան Անանիա Շիրակացու մասին: Նրան վերստին հիշում են X դարում, իսկ XI դարում նրա գիտական ու մատենագրական ժառանգությունը հայ իրականությունում շրջանառության մեջ դնելու խնդիրը Հայոց կաթողիկոս Պետրոս Գետադարձի մոտ առաջ է քաշել XI դարի հայ լուսավորչական շարժման վիթխարի դեմքը՝ Գրիգոր Մագիստրոսը: Անանիա Շիրակացու երկու դար մոռացված լինելը եզակի երևույթ չէ: Նման դեպքեր հայտնի են համաշխարհային հռչակ ունեցող մտքի տիտանների վերաբերյալ: Լեոնարդո դա Վինչին (1452-1519), որը իտալական Վերածննդի կատարելատիպն էր, հորջորջված «universal man», առաջնակարգ էր արվեստի և գիտության ամենատարբեր բնագավառներում,- մարդկության կողմից մոռացված էր ամբողջ երեք դար:

Գրիգոր Մագիստրոսից մեզ հասած թղթերից պարզ երևում է հայ գիտնականի ու մատենագրի ձգտումը Հայաստանում գիտությունը զարգացած տեսնելու իրողությունը: Պատահական չէ, որ նրա թղթերից իմանում ենք, որ թարգմանում էր Էվկլիդեսի երկրաչափությունն ու Պլատոնի բարդագույն աշխատությունները, որպեսզի հայ միտքը զարգանար անտիկ գիտության նվաճումներով: Մագիստրոսի պրպտուն միտքը կանգ է առնում Անանիա Շիրակացու ժառանգության վրա, և որովհետև ինքը ծանոթ էր արաբների, քաղդեացիների, հույների գիտական նվաճումներին, ապա համոզված է, թե «Արամեան» ազգը չպետք է հետ մնա աշխարհի առաջընթացից, ու ժամանակն է, որ Անանիա Շիրակացու մատյանները դրվեն գործածության մեջ և ուսումնասիրվեն. «Եւ արդ՝ քանզի սակս մատենին Անանիայի եղև յիշատակ իմաստասիրելոյս մեզ, բե՛ր ոչինչ խրթին և անյայտաբար. կամիմք

զհայցուած մեր ծանուցանել մերոյ լուսաւորչիդ. 'ի բազմաց անփոյթ եղելոյ այսպիսի գործառնութիւնք և հանդէսք, որ ոչ երբէք ի ստադին վարժելոց գրամարտկոսաց և քերդողաց հնացեալ, ի մոռացումն այսպիսւոյ մատենի ոչ միայն եղև անկանել, այլ և բազմաց, որպէս ի մերոյն Մովսիսէ ուսեալ, գտեալ գտաք, և յայդմ մատենի մակագրութեան վերծանեաք: Քանզի Արամեան սերի հպարտութիւն և անամոք բնութիւն և խստապարանոց բարս ոչ ստորակայի յայսոսիկ կրթութիւնս յարատևական հաւանել, կամ եթէ ոչ փոյթ, որք պետականին հասին բախտի, մեծարու լինել և խուզել զխոհեմական արհեստս ի զարդ քարգոնոսական ապարանին, որպէս մեծ Փտլոմէոսն այն և որք այլք այդպիսիք. և զի բազում աշխատութեամբ խոնջեալ և տագնապեալ, մինչ տակաւին յիմում անտիականն ելով տիս, հազիւ հազ մակացու այսմ եղեալ, սուղ ինչ էակացն հասեալ, ըստ որումն են յԱրաբացւոց և Քաղդէացւոց և Յունաց, ոչ դանդաղեցայ քննութեամբ զփորձ առնուլ:

Եւ խնդրեմք ի քումմէ լուսափայլութենէդ զնորագոյնն մատեան շնորհել մեզ, զի այժմ մերձ առ ծերութիւն հասեալ եմք, և դիւրին վերծանեալ հասցուք ըստ կարողութեան...»[1]:

Հակոբ Անասյանն առանձնացրել է Անանիա Շիրակացու վերաբերյալ փաստեր հաղորդած միջնադարյան մատենագիրներին[2]:

Անդրադառնանք Շիրակացու մասին հիշատակումներ ունեցող մատենագիրներին՝ ըստ ժամանակագրական կարգի: Առաջին հայ պատմիչը, որ հիշում է Անանիա Շիրակացուն մինչև Գրիգոր Մագիստրոսի հանրահայտ թղթի երևան գալը, Հովհաննես Դրասխանակերտցին է. «Յայնմ ժամանակի ասեն լինել զկռիւն, որ ի քաղաքագիւղն Երեւանի, զոր և բաւական քեզ ուսուցանեն զայնր պատերազմի զհանգամանս, որ նախքան զմեզ պատմագրեցին: Իսկ Անաստասայ հայրապետին հոգացեալ վասն հայկականս տօմարի, զի թերեւս անշարժ զնա ըստ այլոց ազգաց մարթասցէ յօրինել, զի միշտ անշարժք լինիցին տօնք տարեկանաց, վասն որոյ և առ ինքն Անանիա Անեցի կոչեալ, որ բանիբուն այնմ արուեստի էր հմուտ, հրամայէ նմա ստեղծագործել զխնդրելին իւր: Իսկ նորա ջան ի վերայ եդեալ և ըստ բոլոր ազգաց պայմանի անշուշտ յօրինեալ զկարգ հայկականս տօմարի, զի բարեձեւագունից ոմանց և զմերս կշռադատեալ՝ մի կարօտասցուք գալ ի զուգաւորութիւն Հռովմայեցւոց»[3]:

Հետագա գրեթե բոլոր մատենագիրները Անանիա Շիրակացու մեծագույն ծառայություններից մեկը հայ իրականության մեջ համարում են VII դարում

---

1 Գրիգոր Մագիստրոսի թղթերը, Բնագիրն առաջաբանով եւ ծանօթութիւններով առաջին անգամ ի լոյս ընծայեց Կ.Կոստանեանց, Ալեքսանդրապոլ, 1910, էջ 9:

2 Հ.Ս.Անասյան, Հայկական մատենագրություն, Ե-ԺԸ դդ., հ.Ա, Երևան, 1959, էջ 759:

3 Հովհաննես Դրասխանակերտցի, Պատմութիւն, Երուսաղեմ, 1867, էջ 117:

Անաստաս կաթողիկոսի պատվերով անշարժ տոմարի կազմումը, որը սակայն կյանքի չկոչվեց Անաստաս կաթողիկոսի մահվան պատճառով: Անշարժ տոմարը Հայաստանում գործածության մեջ մտավ XI դարում, մեկ այլ լուսավորյալ անհատի՝ Հովհաննես Սարկավագ Իմաստասերի ջանքերով[1]: Հովհաննես Սարկավագին հայտնի էին Անանիա Շիրակացու երկերը. «Հայ մտածողը տալիս է նաև Արեգակի ոչ լրիվ խավարման բացատրությունը, ըստ որում բառացի կրկնելով Շիրակացուն. «Եղև պակասութիւն լուսոյ արեգական ի դէպ ուղիղ և հարթ ներքոյ նորա կալոյ ընթացիւք լուսնոյդ»[2]:

Ստեփանոս Տարոնեցի Ասողիկը իր «Պատմութիւն տիեզերական» երկում երկու անգամ հիշատակում է Անանիա Շիրակացուն: Առաջին հղումը վերաբերում է աստվածաշնչային դեպքերին ու հրեաների Եգիպտոսից դուրս գալուն, որը հայ պատմիչը վկայակոչում է ըստ երկու համահունչ աղբյուրների՝ Որոգինես և Անանիա Շիրակացի. «Իսկ յելիցն յեգիպտոսէ մինչև ցշինուած տաճարի ըստ Որոգինեայ և Անանիայի Շիրակացւոյ ժողովին ամք ՆՁ, հանեալ ի բաց զեբրայեցւոց ծառայութեան ժամանակն, զոր այլազգեացն ծառայեցին. մանաւանդ եթէ միանգամայն իսկ յար զժամանակն թուիցեմք, զազատութեանն խառն ընդ ծառայութեանն, և զժամանակ Դատաւորացն առանձինն թուիցեմք ելանէ չափ պատմագրաց ամենեցուն»[3]:

Ստեփանոս Տարոնեցի Ասողիկը երկրորդ անգամ հիշում է անշարժ տոմարի առիթով. «Իսկ Անաստաս խորհեալ Հայաստանեայցս կարգել տոմար անշարժ ըստ այլոց ազգաց և հրամայէ Անանիայի Շիրակացւոյ կարգել զքրոնիկոնն հրաշազան, յորում զտոմարս մեր կարգեաց անշարժ:

Եւ Անաստասայ խորհեալ ժողովով և եպիսկոպոսօք հաստատել զքրոնիկոնն և վախճանի, կացեալ յաթոռն ամս Զ»[4]: Անաստաս կաթողիկոսը գահակալել է 661-667 թթ.: Նա պատրաստվում էր եպիսկոպոսական ժողովի ժամանակ վավերացնել Անանիա Շիրակացու ստեղծած անշարժ տոմարը, սակայն մահը անկատար է թողնում նրա ցանկությունը[5]:

Սամվել Անեցու «Հաւաքումն ի գրոց պատմագրաց» երկում շատ հետաքրքիր փաստեր կան Անանիա Շիրակացու վերաբերյալ: Իր ինքնակենսագրականում Շիրակացին ցավով է խոսում ապերախտ

---

1 Հովհաննես Սարկավագը 1084-ին բարեկարգել է Հայոց շարժական տոմարը, այն վերածել անշարժի, հաստատել տոների օրերն ու նահանջ տարին (տե՛ս «Քրիստոնյա Հայաստան հանրագիտարան», Երևան, 2002, էջ 632):

2 Կ.Ա.Միրումյան, Հովհաննես Սարկավագի աշխարհայացքը, Երևան, էջ 65:

3 Ստեփանոս Տարոնեցի Ասողիկ, Պատմութիւն տիեզերական, Ս.Պետերբուրգ, 1885, էջ 9: Տե՛ս նաև Ստեփանոս Ասողիկ Տարոնեցի, Տիեզերական պատմություն, Թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները՝ Վ.Հ.Վարդանյանի, Երևան, 2000, էջ 51-52:

4 Ստեփանոս Տարոնեցի Ասողիկ, Պատմութիւն տիեզերական, էջ 99:

5 Ամենայն Հայոց կաթողիկոսներ, Խմբագրությամբ Պետրոս Հովհաննիսյանի, Երևան, 2001, էջ 64:

աշակերտների մասին, որոնք թերուս մնալով դադարեցնում են ուսումը մեծ գիտնականի ու մանկավարժի դպրոցում, սկսում են իրենք դասավանդել, դեռ անամոթաբար վարկաբեկում են իրենց ուսուցչին՝ հերյուրելով զանազան ստեր. «Զի իբրև եկի ես, բազումք ընթացան առ իս յուսումն և սուղ ինչ խելամտեալ՝ թողին զիս և գնացին, ոչ մնացեալք կատարման արուեստին, բաւական համարեալ վարուց կենցաղոյս զորչափիկն առին և փոքր ինչ յինէն մեկուսացեալք՝ սկսան ուսուցանել, զոր ոչ գիտէին և քարոզել զանձինս վարդապետս, որում ոչ էին հասու: Կեղծաւո՛ր և սնափա՛ռք, ցուցանեն ունել զկերպարանս գիտութեանն և կոչիլ ի մարդկանէ բաբբի հայցեն: Այլ և ի վերայ իմ պարսաւանս ասէին տգիտութեան, որք յինքենէ էին յերիւրեալք...»[1]:

Սամվել Անեցին ցավով նշում է Անանիայի մի քանի աշակերտների անուններ՝ Հերմոն, Տրդատ, Ազարիա, Եզեկիել, Կիրակոս, որոնք մեկնում են Երուսաղեմ և ընդունում երկբնակություն ու երբ հետ են վերադառնում, Անանիա Շիրակացին նրանց չի ընդունում: Վերջիններս էլ ուր գնում են, սկսում են հայհոյել իրենց ուսուցչին. «Աշակերտքն Անանիայի Հերմոն և Տրդատ և Ազարիա, Եզեկիէլ և Կիրակոս երթեալ յերուսաղէմ հաւանեցան երկաբնակացն և ի դարձին ոչ ընկալաւ զնոսա ճշմարիտ վարդապետն Անանիա: Իսկ նոքա ուր հասանէին, զնա ասէին պատճառ հայհոյութեան, զոր մի ոք իշխեսցէ ասել կամ հաւատալ»[2]:

Սամվել Անեցին, ինչպես երևում է ուշադիր հետազոտել է Անանիա Շիրակացու մատենագրությունը և լայնորեն օգտվել է դրանից: Այդ մասին ուղղակի վկայություն ունի պատմաբան Կարեն Մաթևոսյանը «Սամվել Անեցու ժամանակագրության ձեռագրերը և նորահայտ լրացումները» գրքում. «Տոմարագիտական իր աշխատության մեջ, որը շարադրված է հարց ու պատասխանի ձևով, Սամվել Անեցին օգտվել է Անանիա Շիրակացու Քննիկոն աշխատության տոմարագիտական բաժնից՝ երբեմն առանձին հատվածներ նույնությամբ արտագրելով»[3]:

Իր մյուս հղման մեջ Սամվել Անեցին հիշում է նաև Անանիայի ծննդավայրը՝ «յԱնէից գեղջէ», պատմում, թե ինչու այլ ազգերի պես տոմարագետ Անանիան անշարժ տոմար հաստատեց, սակայն սուրբ Անաստասի՝ պատվիրատուի մահվան պատճառով ժողովն այն չհաստատեց, և հայ եկեղեցին իր հին տոմարով էր առաջ ընթանում. «Անաստաս կոչէ առ իւր զմեծ վարդապետն Անանիա յԱնէից գեղջէ՝ անշարժ ըստ այլոց ազգաց դնել տօմար և մերոյ

---

1 Ա.Գ.Աբրահամյան, Անանիա Շիրակացու մատենագրությունը, Ուսումնասիրություն, Երևան, 1944, էջ 209:

2 Սամվել Անեցի, Հաւաքումն ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893, էջ 85:

3 Կարեն Մաթևոսյան, Սամվել Անեցու ժամանակագրության ձեռագրերը և նորահայտ լրացումները, Երևան, 2009, էջ 25:

ազգիս, զոր արարեալ մեծաւ ջանիւ, և մինչ կամէին ժողովով հաստատել զնոյն՝ վախճանի սուրբն Անաստաս՝ անփոյթ եղեալ իրն զկնի եկելոցն, այլ առաջին կարգաւն վարէին»[1]:

Ուշագրավ է Կիլիկիայի կաթողիկոս Գրիգոր Տղայի նամակներից մեկում Անանիա Շիրակացու մասին գրվածը: Նա ակնարկում է Անանիայի ինքնակենսագրականի մեջ եղած այն իրավացի տրտունջը իր հայրենակիցների՝ դեպի գիտությունը, ուսումն ունեցած անտարբերության վերաբերյալ. «Իսկ տումարին անուն ի մերասէր ազին լեզու, թուի թէ զհամարողականն դնէ թիւ, և զժամանակագրականն, և զնորա առ այս չունիմք իրք, թուի թէ և ոչ և որ նոցայն են: Իսկ առ այս Անանիա և Անդրեաս բազմավէպ գրութեամբ ծառեցին, յավելո՞ւք և զնոսա յանէծս: Թուի թէ այս ի վաղնջաց հետէ, որպէս պատմէ նոյն ինքն Անանիա յաղագս անբարեսէր ազգիս տրտնջմամբ, առ որս ոչ պատուի գիտութիւն, այլ անձնահաճ կամք»[2]:

Բանասեր և Վարդան Արևելցու մատենագրության քաջ գիտակ Փայլակ Անթապյանը համոզված է, թե Վարդան Արևելցու «Տիեզերական պատմության» Անանիա Շիրակացուն վերաբերող հատվածը, որը նվիրված է անշարժ տոմարի ստեղծմանը և Անաստաս կաթողիկոսի՝ տոմարի պատվիրատուի մահվանը, քաղված է Հովհաննես Դրասխանակերտցու պատմությունից. «Հովհաննես Դրասխանակերտցու «Պատմությունը» Վարդան Արևելցու «Հաւաքումն պատմութեան» առավել կարևոր սկզբնաղբյուրներից է, որին նա դիմել է հաճախ և ընդարձակ բառացի քաղվածքներ վերցրել նրանից: ...Այժմ փորձենք բնագրական մի քանի զուգահեռներով ցույց տալ, որ իրոք Հովհաննես Դրասխանակերտցու հիշյալ աշխատությունը Վարդան Արևելցու անմիջական և հիմնական աղբյուրներից է, որին նա միաժամանակ մեծ վստահություն է ընծայել»[3]:

Վարդան Արևելցու պատմությունը հայ միջնադարի եզակի գիտակներից մեկը՝ Լազարյան ճեմարանի պրոֆեսոր Մկրտիչ Էմինը, 1861-ին Մոսկվայում հրատարակել է ռուսերեն և ծանոթագրություններում Անանիա Շիրակացու մասին գրում է. «Ананиа Ширакуни, т.е. Ширакский по прозванию Хамарох, Համարող, т.е. «математик», уроженец города Ани, жил во второй половине VII века. По окончании курса богословия в Армении он отправился в Грецию для усовершенствования себя в светских науках. Возвратившись на родину, он посвятил себя ученым занятиям и написал много сочинений преимущественно математических. Труды Анания Ширакского до сих пор остаются неизданными,

1 Սամվել Անեցի, Հաւաքումն ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893, էջ 84:
2 Գրիգոր Տղա, Նամականի, Վենետիկ, 1838, էջ 23-24:
3 Փ.Փ.Անթապյան, Վարդան Արևելցի, Կյանքն ու գործունեությունը, գիրք Ա, Երևան, 1987, էջ 259:

за исключением его трактата «О мерах и весах у древних» с комментариями вышел в Венеции в 1821г.»[1].

XIII դարի պատմիչ Մխիթար Այրիվանեցին իր պատմության մեջ Շիրակացու մասին ընդամենը ասում է հետևյալը. «Անանիա վարդապետն արար անշարժ տոմար»[2]:

Շատ ջերմ բնութագրումներ է տվել Անանիա Շիրակացուն նույն՝ XIII դարի պատմիչ Կիրակոս Գանձակեցին՝ նրան անվանելով «այր բանիբուն և հանճարեղ», որը Անաստաս կաթողիկոսի պատվերով պատրաստում է անշարժ տոմարը, վերջինս, սակայն, գործածության մեջ չի դրվում Անաստաս կաթողիկոսին փոխարինած այլ հայրապետների անփութության պատճառով. «Եւ յետ Ներսիսի առ զկաթողիկոսութիւն տէր Անաստաս ամս վեց: Սա կոչեաց առ ինքն զմեծ վարդապետն Անանիա՝ ի Շիրակ գաւառէ, այր բանիբուն և հանճարեղ, գիտող յոյժ ամենայն տոմարական արուեստից, զի կարգեսցեն անշարժ տոմար հայոց, որպէս այլոց ազգաց: Զոր արարեալ մեծաւ ջանիւ, և մինչ կամէին ժողովով հաստատել, վախճանի սուրբն Անաստաս: Անփոյթ եղեալ իրն զկնի եկելոցն, այլ առաջին կարգաւն վարէին»[3]:

Անանիա Շիրակացուն անդրադարձ ունի նաև հայ եկեղեցու նշանավոր հայրերից Գրիգոր Տաթևացին իր «Գիրք հարցմանց» երկում: Մեծ փիլիսոփայի և րաբունապետի գրվածքից իմանում ենք, որ XIV դարի երկրորդ կեսին և XV դարի առաջին տասնամյակում արդեն հայ մատենագրության մեջ շփոթ կար կապված Անանիա Շիրակացու և Մովսես Խորենացու երկերի հեղինակային պատկանելության խնդրում: Սակայն հայ հոգևորականության համար Անանիա Շիրակացու հակաքաղկեդոնական լինելը բացարձակ ու անվերապահ ճշմարտություն էր: Նույնությամբ մեջբերում ենք «Գիրք հարցմանցի» համապատասխան հատվածը.

«ՀԱՐՑ - Վասն է՞ր քաղկեդոնիկքն և նեստորականքն ուրանան ըզբնութեամբ միաւորութիւն:

ՊԱՏԱՍԽԱՆ - Յաղագս երից պատճառաց ուրանան զմիաւորութիւն ի մարդեղութիւն բանին:

ՀԱՐՑ (Պրակ թ) - Որպէ՞ս ասեմք Աստուած և մարդ:

ՊԱՏԱՍԽԱՆ - Աստուած և մարդ ասել Քրիստոսի կրկին է իմացումն: Ոմանք զբոլորն բաժանեալ ասեն Աստուած և մարդ՝ որպէս նեստորականքն: Եւ ոմանք մասամբ և բաժանեալ, որպէս քաղկեդոնիկքն ասեն:

---

1 Вардан Великий, Всеобщая история, перевел Н.Эмин, Москва, 1861, с. 117-118.

2 Մխիթար Այրիվանեցի, Պատմութիւն Հայոց, ի լոյս ընծայեց Մկրտիչ Էմին, Մոսկվա, 1860, էջ 50:

3 Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, Աշխատասիրությամբ Կ.Ա.Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 62:

Այլ մեք զբոլորն և անբաժան ասեմք Աստուած և մարդ. այսինքն մարդկութեամբն մարդ և աստուածութեամբն Աստուած»[1]:

Գրիգոր Տաթևացու ապրած օրերին Անանիա Շիրակացին իր սահմանած տոմարական ամսաթվերով հայ հոգևորականության համար անվերապահորեն հեղինակություն էր. «Իսկ այլք ասեն, թէ Անանիա Շիրակունիսէ ասացեալ. եւ զպենտակոստէին և զվարդավառին, և զսուրբ Գրիգորին, և զՅովհաննուն, և զմարգարէիցն, և զՎարդանանցն, և զառաքելոցն, և զթագաւորացն, և զԱնտօնին: Զայս ամենայն ոմանք Անանիայի տան, և ոմանք Խորենացւոյն»[2]:

Հակոբ Ղրիմեցին ևս XIV դարի երկրորդ կեսին և XV դարի առաջին քառորդին օգտվել է Անանիա Շիրակացու տոմարական աշխատություններից: Այդ մասին վկայություն ունի Ջ.Էյնաթյանը. «Ամենայն հավանականությամբ «այնժամ ունեին» արտահայտությունը վերաբերում է Անանիա Շիրակացու ՇԼԲ-ին, որտեղ ապրիլի 4-ի Ավագ լրման դիմաց վերադիրը դրված է Թ (9)»[3]:

Ըստ Թովմա Մեծոփեցու արդեն XV դարում դավանաբանական խնդիրներում Անանիա Շիրակացու անունը դրվում էր Գրիգոր Լուսավորչի, համընդհանուր քրիստոնեական եկեղեցու հեղինակությունների և հայ նշանավոր մատենագիրների ու հայ եկեղեցու նվիրյալների անունների կողքին. «Իսկ աշակերտք նորին տգետ գոլով՝ ոչ էին առեալ զծաշակ դաւանութեան սուրբ եկեղեցւոյ՝ զմեծի Լուսաւորչին Գրիգորի, զԱստուածաբանին Գրիգորի, զԱթանասի եւ զԿիւրեղին և զմերոց աստուածաբանիցն զՍտեփաննոսին Սիւնեաց, **զԱնանիայի Շիրակացւոյն**, զՊօղոսի Տարօնացւոյն, զՅովհաննու, զՍարգսի Հաղպատացւոյն, զԴավթի փիլիսոփային, զՄովսիսի քերթողահօրն, զԱսողիկ թարգմանչի եւ զայլոց վարդապետաց սրբոց»[4]:

Անանիա Շիրակացուն որպես բանաստեղծ է ներկայացնում Առաքել Սյունեցին (1350-1425)՝ Դավիթ Անհաղթին նվիրված իր գրքում: Առաջաբանում Առաքել Սյունեցին գրում է, թե Դավիթ Անհաղթի կենսագրության որ հարցերին ինքը պետք է պատասխանի.

«Նախ՝ թէ ուստի՞ էր Դաւիթ:
Երկրորդ՝ յորմէ՞ ազգէ էր:
Երրորդ՝ թէ ո՞րում ժամանակի էր:
Չորրորդ՝ թէ որով ուսմամբ էր:
Հինգերորդ՝ ո՞րպիսի շնորհս ընկալաւ:
Վեցերորդ՝ ո՞րպիսի պատիւս ունէր:

---

1 Գրիգոր Տաթևացի, Գիրք հարցմանց, Երուսաղեմ, 1993, էջ 76-77:
2 Նույն տեղում, էջ 637:
3 Հակոբ Ղրիմեցի, Աշխատասիրությամբ Ջ.Ա.Էյնաթյանի, Երևան, 1987, էջ 390:
4 Թովմա Մեծոփեցի, Պատմութիւն Լանկ-Թամուրայ և յաջորդաց իւրոց, Փարիզ, 1860, էջ 38:

Եօթներորդ՝ թէ վասն է՞ր ասի Անյաղթ:

Ութերորդ՝ թէ զի՞նչ է փիլիսոփայն:

Իններորդ՝ թէ քանի՞ գիրք սահմանեաց 'ի Հայս:

Տասներորդ՝ թէ վասն է՞ր ո՛չ արդիւնացաւ իմաստք նորա 'ի Հայս»[1]:

Այս հարցախմբի մեջ առաջինը Դավիթ Անհաղթի որտեղ ծնված լինելն է: Առաքել Սյունեցին ասում է, թե Դավիթը Տարոն գավառի Ներգին գյուղից էր, ուր Անանիա Շիրակացին իր առավոտյան շարականն է ասել. «Եւ արդ՝ առաջին թէ ո՞ւստի էր նա: Այսինքն Ներգինացի կոչի՝ Ներգինեաց է գիւղն այն, ուր Անանիայ Շիրակացին առաւօտու երգերն էր ասացեալ: Եւ Դաւիթ յայսմ գեղջէ էր որ է 'ի Տարօնոյ գաւառէն»[2]:

Առաքել Սյունեցու գրքի առաջաբանում կան որոշ անճշտություններ՝ կապված Դավիթ Անհաղթի կենսագրության հետ: Հայ մեծ փիլիսոփայի ճշգրտված կյանքի պատմությունը փաստական հաստատուն տվյալներով շարադրել է հին Հայաստանի փիլիսոփայության քաջ գիտակ Սեն Արևշատյանը[3]:

Ինչպես ընդունված էր միջնադարում՝ նշանավոր քրիստոնյաների անունները, գործերը, մտքերն անցնում էին «Հայսմավուրքների» մեջ: Անանիա Շիրակացին ևս հիշատակվում է «Հայսմավուրքում»: «Յայսմաւուր գարնանամուտ է և յիշատակ չորրորդ աւուր արարչութեանն Աստուծոյ» խորագրի տակ գրված է. «Այսմ վկայէ և Անանիա վարդապետն մեր Շիրակուանցին, որ ետես զարեգակն ի նմանութիւն գեղեցկատիպ պատանեկի և ասաց նմայ:

Ընդ ո՞ր գաս և գնաս և նա ասաց ի ներքն աշխարհիս անցանեմ»[4]:

Սրանք են միջնադարի մատենագիրների վկայությունները Անանիա Շիրակացու մասին: XIX դարի երկրորդ կեսից մեծացել է հետաքրքրությունը դեպի VII դարի հայ գիտնականի անձն ու գործը ու թեև դեռ 1861-ին Մկրտիչ Էմինը անհանգստացած էր, թե Անանիայի գործերը դեռ հրատարակված և ուսումնասիրված չեն, ապա այսօր առկա է թե՛ հայերեն և թե՛ այլ լեզուներով հարուստ գրականություն և ստեղծվել են նրա երկերի քննական բնագրերը: Անանիա Շիրակացու անունը միջնադարում մեծ մասամբ հիշատակվում է Անաստաս Ակոռեցի կաթողիկոսի անվան կողքին՝ մի լուսավոր հայրապետի, որը մինչև կաթողիկոս դառնալն աչքի էր ընկել իր բարեգործությամբ ու եռանդով, և դրա առհավատչյան է նաև, որ նա է պատվիրել Անանիա Շիրակացուն Հայաստանի համար անշարժ տոմարը կազմելը:

---

1 Առաքել Սյունեցի, Վերլուծութիւն «Սահմանաց գրոց» Դաւթի Անհաղթի, Մադրաս, 1797, էջ 169:

2 Նույն տեղում:

3 Տե՛ս Դավիթ Անհաղթ, Երկեր, Թարգմանությունը գրաբարից, առաջաբանը և ծանոթագրությունները Սեն Արևշատյանի, Երևան, 1999, էջ 4:

4 Հայսմավուր, Կ.Պոլիս, 1706, էջ 639, պահպանված են բնագրի ուղղագրությունն ու կետադրությունը: